ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 211 -Ա
« 11 » ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N181-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայտարարել Վայոց ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունները՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝

1) Հրապարակել Վայոց ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթներ անցկացնելու մասին հայտարարությունները՝ համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N181-Ն որոշմամբ հաստատված կարգի N1 ձևի:

2) Ապահովել հայտարարությունների հրապարակումը և մրցույթների անցկացման ընթացակարգերը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բ.ԵՂԵՎՆԱԾՈՐ